ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԻՆԵ ԱՐԱՄԻ ԹՈՒՄԱՍՅԱՆ

Ծնվել է 1986 թվականի նոյեմբերի 21-ին, Երևան քաղաքում:

Կրթություն

2003 թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի թիվ 147 միջնակարգ դպրոց-կրթահամալիրը (ոսկե մեդալ):

2003-2007 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան (գերազանցության դիպլոմ):

2007-2009 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում (քաղաքացիաիրավական մասնագիտացում)՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան:

2023 թվականի սեպտեմբերի 15-ին ավարտել է Արդարադատության ակադեմիայի դատավորների թեկնածուների հավակնորդների քաղաքացիական մասնագիտացման ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման դասընթացը և Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ ԲԴԽ-86-Ո-261 որոշման համաձայն՝ ներառվել է դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնում:

Աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալներ

2009 թվականի դեկտեմբերի 27-ից մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի կենտրոնական մարմնում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները. 2008-2009 թվականներին՝ Կազմակերպաիրավական վարչության կրտսեր մասնագետ, 2009-2014 թվականներին՝ Կազմակերպաիրավական վարչության առաջատար մասնագետ, 2014-2015 թվականներին՝ Կազմակերպաիրավական վարչության ավագ մասնագետ, 2015-2018 թվականներին՝ Իրավական վերլուծության վարչության Իրավական վերլուծության և դատական հանձնարարությունների բաժնի ավագ մասնագետ:

2018 թվականի նոյեմբերից 2023 թվականի մայիս ամիսը զբաղեցրել է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի Իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչության **Բարձրագույն դատական խորհրդի նիստերի նախապատրաստման և որոշումների նախագծերի մշակման բաժնի պետի** պաշտոնը:

2023 թվականի մայիսից դեկտեմբեր ամիսներին զբաղեցրել է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի **Դատավորներին և թեկնածուներին առնչվող հարցերի վարչության պետի** պաշտոնը:

Հանրապետության նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 7-ի հրամանագրի համաձայն նշանակվել է **Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավորի** պաշտոնում և պաշտոնավարել է մինչև 2025 թվականի օգոստոսի 4-ը ներառյալ (լիազորությունները դադարել են սեփական դիմումի համաձայն):

Այլ տեղեկություններ

Ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները բարեխիղճ կատարելու համար 28.12.2017 թվականին շնորհվել է դատական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

2023 թվականին և 2025 թվականից առայսօր դասավանդում է Արդարադատության ակադեմիայում:

Տիրապետում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներին: Անկուսակցական է: Ամուսնացած է, ունի երկու զավակ: